# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

**07/03/2023թ.**

**Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահին**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 65-րդ հոդվածի 1-ին մասի և 67-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Լիլիթ Գալստյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը,

Առաջարկում եմ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

(076) **ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ**

(079) **ԷԼԻՆԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:»

2) 5-րդ մասում լրացնել նոր՝ 8-րդ կետ.

«8. Անձինք, ում ընտրության դեպքում կխախտվի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը:»

**Հոդված 2.** Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում «հեղինակավոր մասնագետ է» բառերից հետո լրացնել «ում ընտրության դեպքում չի խախտվի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը:» նախադասությունը:

**Հոդված 3.** Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում.

1) հանել «սեռի ներկայացվածությամբ» բառերը,
2) «ժամկետով» բառից հետո լրացնել «Կարգավորող պետական մարմնում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:» նախադասությունը:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

## ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### Հոդված 23. Հանրային հեռարձակողի խորհուրդը

1. Հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է:

2. Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահի և Խորհրդի վեց անդամ: ~~Խորհրդում պետք է ապահովվի սեռային ներկայացվածությունը:~~ Խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:

3. Խորհրդի անդամներին մրցութային կարգով նշանակում է վարչապետը՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող անընդմեջ երկու անգամից ավել ընդգրկվել Խորհրդի կազմում:

4. Խորհրդի անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող և բարձրագույն կրթություն ունեցող, տեսալսողական բնագավառի, ինչպես նաև գիտության, կրթության, մշակույթի և լրագրության ոլորտի գործիչներ:

5. Խորհրդի անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել՝

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

2) անձը, որը դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

3) կուսակցությունների ղեկավար մարմինների անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

4) մասնավոր Հեռարձակողների հիմնադիրները.

5) Հանրապետության նախագահը և նրա հետ փոխկապակցված անձինք.

6) Կառավարության անդամները և նրանց հետ փոխկապակցված անձինք.

7) Ազգային ժողովի նախագահը և նրա հետ փոխկապակցված անձինք:

8) Անձինք, ում ընտրության դեպքում կխախտվի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը

6. Խորհրդի անդամ նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

### Հոդված 34. Կարգավորող պետական մարմնի անդամների թեկնածուներին և անդամներին ներկայացվող պահանջները և նրանց վարձատրության կարգը

1. Կարգավորող պետական մարմնի անդամի թեկնածու կարող է լինել 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, որն ունի հեռարձակման, տնտեսության, կառավարման, ճարտարագիտության, մշակույթի, արվեստի կամ իրավագիտության բնագավառներում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն, բարձրագույն կրթություն,

զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ է, ում ընտրության դեպքում չի խախտվի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված յուրաքանչյուր սեռի ներկայացվածության պահանջը:

2. Կարգավորող պետական մարմնի անդամ չի կարող լինել՝

1) անձը, որը դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը:

3. Կարգավորող պետական մարմնի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

4. Կարգավորող պետական մարմնի անդամները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:

5. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորություններն ստանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կարգավորող պետական մարմնի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.

3) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

6. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնն ստանձնելիս տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Սահմանադրությանը և օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության և արդարության սկզբունքով՝ անկախ որևէ քաղաքական կամ տնտեսական շահից:»:

7. Կարգավորող պետական մարմնի անդամների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

**Հոդված 35. Կարգավորող պետական մարմնի կազմավորման կարգը**

1. Կարգավորող պետական մարմինը բաղկացած է յոթ անդամից: Կարգավորող պետական մարմնի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի

ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:~~՝ սեռային ներկայացվածությամբ~~: Կարգավորող պետական մարմնում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:

2. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունների ավարտման օրվանից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ, և ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ, իսկ այլ հիմքով թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղն առաջանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարգավորող պետական մարմնի նախագահը, իսկ կարգավորող պետական մարմնի նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում կարգավորող պետական մարմնի նախագահին փոխարինող անդամն այդ մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին:

3. Ազգային ժողովը կարգավորող պետական մարմնի անդամի ընտրությունը կատարում է Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Կարգավորող պետական մարմինն իր կազմից ընտրում է կարգավորող պետական մարմնի նախագահ: Կարգավորող պետական մարմնի անդամը կարող է առաջադրվել որպես կարգավորող պետական մարմնի նախագահ ինքնաառաջադրման կամ կարգավորող պետական մարմնի որևէ այլ անդամի կողմից իր համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:

5. Կարգավորող պետական մարմնի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկում են կարգավորող պետական մարմնի բոլոր անդամները:

6. Քվեարկության համար կազմվում է քվեաթերթիկ, որում ներառվում են բոլոր թեկնածուները:

7. Քվեարկելիս կարգավորող պետական մարմնի անդամն ունի մեկ ձայն: Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:

8. Եթե քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա ինքնաառաջադրվում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները, և անցկացվում է լրացուցիչ քվեարկություն:

9. Եթե երկրորդ առավել ձայներ ստացած թեկնածուները երկուսն են, ապա հավելյալ քվեարկությամբ որոշվում է, թե նրանցից ով կարող է ինքնաառաջադրվել:

10. Լրացուցիչ քվեարկության ժամանակ կարգավորող պետական մարմնի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելին ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

11. Կարգավորող պետական մարմնի նախագահն ընտրվում է կարգավորող պետական մարմնի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կարգավորող պետական մարմնի անդամն իրավունք չունի հրաժարվելու քվեարկությունից և քվեարկում է միայն «կողմ» կամ «դեմ»:

12. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել կարգավորող պետական մարմնի անդամ, ներառյալ՝ նախագահ:

13. Կարգավորող պետական մարմնի նախագահը պաշտոնավարում է որպես կարգավորող պետական մարմնի անդամ մինչև իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Կարգավորող պետական մարմնի նոր նախագահի ընտրությունը կատարվում է կարգավորող պետական մարմնի անդամների կազմը համալրվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**

«Տեսալսողական մեդիային մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի ընդունումը պայմանավորված է գործող օրենքում առկա անորոշությունները վերացնելու և Հանրային հեռարձակողի կառավարման մարմնում, ինչպես նաև Կարգավորող պետական մարմնում կին թեկնածուների համար առկա խոչընդոտները նվազեցնելու անհրաժեշտությամբ:

**1.1 Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները**

Ներկայումս գործող օրենսդրական կարգավորման՝ «Տեսալսողական մեդիային մասին» ՀՀ օրենքի (16.07.2020թ) համաձայն Հանրային հեռարձակողի խորհրդում և Կարգավորող պետական մարմնում կանանց ներգրավվածության իրավական հիմքերը խոցելի են, ձևակերպված են իրավական անորոշությամբ, ինչը բավարար երաշխիքներ և գործուն հնարավորություններ չի ապահովում կանանց ներուժն առավել արդյունավետ իրացնելու համար: Մասնավորապես, Օրենքում (Հոդված 23, 2-րդ կետ), սոսկ ամրագրված է, որ Հանրային հեռարձակողի կառավարման խորհրդի կազմը (7անդամ) պետք է սեռային ներկայացվածություն ապահովի՝ առանց հստակեցնելու մեխանիզմը կամ համամասնությունը:

Նույն անորոշ՝ «սեռային ներկայացվածություն» ձևակերպումն է նաև Կարգավորող պետական մարմնի (7անդամ) կազմավորման պարագայում (Հոդված 35, 1-ին կետ): Ըստ էության, որոշումներ կայացնող և վերահսկողական բացառիկ նշանակություն ունեցող այս երկու կարևորագույն մարմիններում լավագույն դեպքում մեկական կին է ներկայացված:

Այսպիսի կացությունը չի արտացոլում ՀՀ Սահմանադրությունը, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և ԵԽ շրջանակներում գենդերային հարցերի վերաբերյալ ընդունված փաստաթղթերը և ՀՀ ստանձնած պարտավորությունները:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրությունը (Հոդված 86) երաշխավորում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, իսկ կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը պետության քաղաքականության հիմնական նպատակներից է:

2013թ. գործում է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը:

2014-2016 թթ. ՀՀ-ն ստորագրել է ԵՄ տնտեսական աջակցության մի շարք փաստաթղթեր, պարտավորվել է ապահովել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կատարումը և մշտադիտարկումը:

2016թ. ուժի մեջ են մտել ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգը», ուր գենդերային հավասարության և կանանց զորացման ուղղությունը 17 թիրախային ուղղություններից մեկն է:

ՄԱԿ-ի անդամ պետությունները Կայուն զարգացման օրակարգի ընդունմամբ (2015) համաձայնել են մինչև 2030թ. բոլոր ոլորտներում հասնել կանանց և տղամարդկանց լիակատար՝ 50/50 հավասարության:

2018 թ-ից ՀՀ-ն ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի անդամ է և վերահաստատել է բոլոր մակարդակներում կանանց դերակատարության ամրապնդմանն ուղղված միջազգային ջանքերին աջակցելու հանձնառությունը:

2019թ. ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունը» և միջոցառումների ծրագիրը, որը քվոտաների ներդրումը դիտարկել է որպես կանանց առաջխաղացման ազգային արդյունավետ մեխանիզմ:

Այնուամենայնիվ, մենք հեռու ենք փաստացի իրավահավասարությունից Գենդերային ճեղվածքի ինդեքսում Հայաստանը նահանջ է արձանագրել՝ նախորդ երեք տարիների 98-րդից հորիզոնականից 2021-ին 156 երկրների մեջ հայտնվել է 114-րդում:

Հռչակված նորմերը և հանձնառությունները դեռևս հեռու են գործնական քաղաքականությունից և այս ուղղությամբ որակական առաջընթաց ապահովելու համար անհրաժեշտ են օրենսդրական ամրագրումներ, և նույնքան կարևոր՝ քաղաքական կամք:

**1.2. Միջազգային փորձի ուսումնասիրությունից առանձնացրել ենք հետևյալը.**

Իռլանդիայի հեռարձակման մարմին՝ բաղկացած 9 անդամից, որոնցից ոչ պակաս, քան 4-ը պետք է տղամարդ լինեն, և նրանցից ոչ պակաս, քան 4-ը՝ կին:

Իսրայելի հանրային հեռարձակման կորպորացիա՝ բաղկացած 19 անդամից, որոնցից առնվազն 6-ը կին պետք է լինեն:

Արգենտինա՝ բոլոր խորհուրդներում և վերահսկիչ հանձնաժողովներում կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը հավասար թվով պետք է լինի, որը կարգավորվում է հավասարազոր հասարակության հասնելու ընդհանուր բանաձևով:

Ֆրանսիայի հաղորդակցության կարգավորող մարմնի 9 անդամները նշանակվում են ըստ Ֆրանսիային գենդերային հավասարության ինդեքսի, որը 45-55%-ի շրջանակում է:

Մակեդոնիայի հեռուստառադիոյի խորհուրդ՝ կազմված 7 անդամից, որոնք նշանակվում են երկու սեռերի հավասար ներկայացվածությամբ:

Մոլդովայի տեսալսողական վերահսկիչ խորհուրդ՝ բաղկացած 9 անդամից, որոնք նշանակվում են գենդերային հավասարության սկզբունքով:

Մի շարք երկրներում Հանրային հեռարձակման վերահսկիչ և առհասարակ կարգավորող մարմիններում կանանց ներգրավվածությունը կարգավորվում է սեռերի հավասարության ինդեքսներով, բանաձևերով և այլ իրավական համընդհանուր նորմերով:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 23-ի 2-րդ կետում և Հոդված 35-ի 1-ին կետում «սեռային ներկայացվածություն» ձևակերպման փոխարեն ամրագրել «յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից» բառերը:

**2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Տվյալ փոփոխությամբ մասնակիորեն կհաղթահարվի Հանրային հեռարձակողի խորհրդում և Կարգավորող պետական մարմնում կանանց թերի ներկայացվածությունը, հանրային ընկալումներում կարժևորվի կանանց ներուժի արդյունավետ կիրառման անհրաժեշտությունը, գենդերազգայուն մոտեցման արդյունքում օրենսդրական մակարդակում Հայաստանը կհաստատի խտրականության կանխարգելմանն ու կանանց իրավահավասարությանն ուղղված իր միջազգային և ներազգային պարտականությունների ուղղությամբ քայլերը:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված կազմակերպությունները եւ անձինք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանի կողմից: Նախաձեռնությանը տեղեկատվական և փորձագիտական աջակցություն են ցուցաբերել «Կանանց տեղեկատվական և վերլուծական ցանց», «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ները, Ազգային ժողովրդավարության ինստիտուտը (NDI):